ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 նոյեմբերի 2018 թվականի N 117-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 16-ի «Հ.Պողոսյանին Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետ նշանակելու մասին» N 1129-Ա որոշումը՝ ***որոշում եմ.***

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2007 թվականի մարտի 9-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի արտակարգ իրավիճակների հանձնաժողովի կազմը հաստատելու մասին» N 28-Ա, 2009 թվականի նոյեմբերի 17-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի գյուղատնտեսական նշանակության հողերի հողատեսքերի փոփոխման մարզային հանձնաժողովի կազմը հաստատելու մասին» N 190-Ա, 2011 թվականի հուլիսի 11-ի «Երեխայի տարիքը որոշող Սյունիքի մարզային հանձնաժողովի կազմը և լիազորությունները հաստատելու մասին» N 119-Ա, 2012 թվականի փետրվարի 7-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների և դրանց անբաժանելի մասը հանդիսացող հողաշինարարական գործի կազմման աշխատանքները համակարգող, մշտական գործող հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2009 թվականի փետրվարի 3-ի N 11-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 14-Ա, 2012 թվականի փետրվարի 15-ի

«Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների գնահատման մարզային հանձնաժողովի անհատական կազմը և աշխատակարգը հաստատելու մասին» N 15-Ա, 2013 թվականի ապրիլի 10-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի 2014-2017 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի կազմման և իրականացման մարզային զարգացման հանձնաժողովի, ծրագրի մոնիտորինգի և գնահատման, ոլորտային աշխատանքային խմբերի անհատական կազմերը և ծրագրի կազմման ժամանացույցը հաստատելու մասին» N 47-Ա, 2014 թվականի նոյեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի զորահավաքային մարմնի կանոնադրությունը, անհատական կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2014 թվականի փետրվարի 18-ի N 20-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 174-Ա, 2015 թվականի փետրվարի 24-ի «Ներքին աուդիտի կոմիտեի անհատական կազմը հաստատելու մասին» N 22-Ա որոշումներով հաստատված հավելվածներում «Վ.Հակոբյան» բառերը փոխարինել «Հ.Պողոսյան» բառերով, 2018 թվականի սեպտեմբերի 13-ի «Հայաստանի Հանրապետության անկախության տոնին նվիրված մշակութային միջոցառում կազմակերպելու նպատակով «Կապանի մշակութային կենտրոն» ՊՈԱ կազմակերպությանը սուբսիդիա հատկացնելու մասին» N 91-Ա, 2018 թվականի սեպտեմբերի 14-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2018 թվականի փետրվարի 15-ի N 15-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 92-Ա որոշումներով հաստատված հավելվածներում «Կ.Համբարձումյան» բառերը փոխարինել «Հ.Պողոսյան» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Հ.ՊՈՂՈՍՅԱՆ

2018թ. նոյեմբերի 5
ք. Կապան